կարողանում էր վճարել իմ ամսականը, իսկ ընծաների փոխարէն ես կատարում էի վարժապետիս տնային գործերը: Առաւօտից մինչեւ երեկոյ հանգստութիւն չունէի. աղբիւրից խմելու ջուր էի բերում, կովերի համար ուտելու խոտ էի քաղում դաշտից, հորթերը բռնում էի, մինչեւ երէցկինը կովերը կթում էր, եւ եթէ ուրիշ գործ չէր լինում, ճաշից յետոյ նստում էի վարժապետիս կողքին, ճանճեր էի քշում, որ նրա անուշ քունը տանի...

Պատահում էր, մեր թաղում մկրտութիւն էր լինում կամ թաղում. այն օրը վարժապետիս համար հարսանիք էր, իսկ մեզ համար մահ: Աշակերտներից մի քանիսը, որոնք մեծ էին հասակով եւ տիրացութիւն անել գիտէին, վեր էին առնում տէր հօր փիլոնը, մաշտոցը, բուրվառը, եւ քահանայական այլ սպասները: Նրանք գնում էին խորհրդի տեղը: Այսպիսի դէպքերում, երբ կարող էինք մի փոքր ազատ շունչ քաշել, աւելի դառն էր լինում մեր վիճակը: Վարժապետը մտածելով, որ իր բացակայութեան ժամանակ մենք անկարգութիւններ կանենք, հնարել էր մի սատանայական միջոց մեզ հանգիստ պահելու համար: Նա մեզ նստացնում էր միմեանցից հեռու, մեր հագուստի լայն փէշերը տարածում էր գետնի վրայ, նրանց վրայ ածում էր մանր աւազ, յետոյ աւազը դրոշմում էր փայտեայ կնիքով, որ յատկապէս դրա համար պատրաստուած էր: Երեւակայեցէ՛ք մեր դրութիւնը, ամբողջ ժամերով պէտք է մեխած մնաս գետնի վրայ, մի շարժում անգամ անել կարող չես, որովհետեւ իսկոյն աւազը կը խառնոի, կնիքը կը լուծոի, եւ վարժապետը այդ տեսնելով, հոգիդ կառնէ...

Այսպիսի պատիժներին խիստ յաճախ ենթարկւում էի ես: Բարերար աստո՛ւծ, ի՞նչ պէտք է անէի, խօ մեռել չէի՞, որ անշարժ մնայի: Պատահում էր, կամ լուն էր կծում, կամ ճանճն էր նեղացնում, կամ վերջապէս մի ուրիշ հարկաւորութիւն ունէի... Վարժապետը դառնում էր տուն մի փոքր տաքացած գլխով. նա գտնում էր կնիքը լուծուած, այն ժամանակ պատրաստ էր ինձ համար կամ անիծուած ֆալախկան, կամ մերկ ծնկներով չոքել աղիւսի մանրած կտորների եւ կամ սիմինդրի հատիկների վրայ: Դարձեալ պէտք է անշարժ մնայի...

Լինում էին օրեր, որ պատիժը ընդհանուր էր դառնում. աշակերտները բոլորը միասին պատժւում էին: Տարոայ մէջ մի քանի անգամ մենք ունենում էինք արձակուրդներ: Մեծ արձակուրդները լինում էին զատկի եւ ծննդեան տօների ժամանակ, իւրաքանչիւր տօնին մի-մի շաբաթ: Երբ տօներից յետոյ աշակերտները կրկին հաւաքւում էին դպրոցը, մեր վարժապետը առանց խտրութեան աշակերտների ոտները դնում էր ֆալախկայի մէջ եւ բոլորին հաւասարապէս ծեծում էր: Ինչո՞ւ համար: — Այդ նրա համար էր, գուցէ աշա-